ԱԼ. ԳՐԻԳՈՐՅԱՆՑ, «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԻՆՏԵԼԻԳԵՆՑԻԱՅԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ (1920—1965)», ԵՐԵՎԱՆ, 1966, 361 ԷՋ (ՌՈՒՍԵՐԵՆ)

Սովետական իշխանության տարիներին Հայաստանի ձեռք բերած վիթխարի նվաճումների մասին լույս են տեսել ոչ քիչ թվով աշխատություններ։ Հատկապես վերջին տասնամյակի ընթացքում սովետահայ պատմաբաններն ընթերցողի սեղանին են դրել ուշագրավ մի շարք գրքեր, որոնցում իր արտացոլումն է գտել այն վիթխարի աշխատանքը, որ կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ կատարել է Հայաստանի աշխատավորությունը սովետական իշխանության գոյության չորս ու կես տասնամյակի ընթացքում՝ տնտեսության, գիտության, կուլտուրայի և հասարակական կյանքի մյուս բոլոր բնագավառներում։

Սակայն, որքան էլ տարօրինակ է, մինչև վերջերս հրապարակի վրա չկար որևէ լուրջ հետազոտություն, որտեղ սիստեմատիկ շարադրված լիներ Հայաստանի տեխնիկական ինտելիգենցիայի ձևավորման ու զարգացման պատմությունը։ Ճիշտ է, առանձին մենագրություններում, դիսերտացիաներում, հոդվածներում բարձրացվել են Հայաստանի տեխնիկական ինտելիգենցիայի ձևավորման ու զարգացման պատմության առանձին կողմերը։ Իր ամբողջության մեջ պրոբլեմի գիտական լուսաբանումը գեռ մնում էր որպես ցանկալի նպատակ։ Անհրաժեշտ էր ստեղծել ընդհանրացնող մի երկասիրություն, որտեղ ոչ թե լուսաբանվեր պրոբլեմի այս կամ այն կողմը, այլ տրվեր Հայաստանի տեխնիկական ինտելիգենցիայի ձևավորման ու զարգացման հետևողական, սիստեմավորված գիտական պատմությունը՝ սկզբից մինչև մեր օրերը։

Այս տեսակետից վերջերս ՀՍՍՀ ԳԱ հրատարակչության կողմից ռուսերեն լեզվով լույս ընծայված՝ պատմական գիտությունների թեկնածու Ալեքսանդր Գրիգորյանցի՝ «Հայաստանի տեխնիկական ինտելիգենցիայի ձևավորումը և զարգացումը (1920—1965)» աշխատությունը, որը հեղինակի երկար տարիների քրտնաջան աշխատանքի արդյունքն է, գալիս է լրացնելու եղած բացը։

Վաղուց է, ինչ ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի ավագ գիտական աշխատող Ալ. Գրիգորյանցը զբաղվում է Հայաստանի արդյունաբերության, Հայաստանի բանվոր դասակարգի, մասնավորապես հայ տեխնիկական ինտելիգենցիայի առաջացման ու զարգացման հարցերով։ Այս ուղղությամբ կատարած նրա աշխատանքի արդյունքները՝ հոդվածներն ու աշխատությունները հայտնի են պատմաբանների (և ոչ միայն պատմաբանների) շրջանում։ Գրախոսվող սույն աշխատությունը հեղինակի տևական աշխատանքի յուրատեսակ հանրագումարն է, նրա գիտական վաստակի ամփոփումը։

Գրախոսվող աշխատությունը բաղկացած է չորս գլխից, ներածությունից ու վերջաբանից։

Ներածության մեջ աշխատության հեղինակը բացահայտում է ինտելիգենցիայի, մասնավորապես տեխնիկական ինտելիգենցիայի՝ որպես պատմական կատեգորիայի, առաջացման պատճառները, ցույց է տալիս նրա դերը հասարակական արտադրության պրոցեսում, նշում նրա սոցիալական վիճակի տրմատական տարբերությունը սոցիալիզմի ու կապիտալիզմի պայմաններում։

Աշխատության առաջին գլխում հեղինակը շարադրում է հայկական տեխնիկական ինտելիգենցիայի ձևավորման պատմությունը։ Բազմաթիվ վավերագրեր ու արխիվային փաստաթղթեր հմտորեն օգտագործելով, նա ընթերցողին տանում է դեպի անցյալ դարի սկզբները, երբ ռուսական տեխնիկական մտքի բարերար ազդեցության տակ Հայաստանի լեռնային արդյունաբերության մեջ հանդես եկան առաջին հայ ինժեներները։

Հայաստանը Ռուսաստանին միացնելուց հետո բարենպաստ պայմաններ են ստեղծվում լեռնարդյունաբերության հետագա զարգացման համար։ Վերջինիս առաջընթացի հետ միասին հայ երիտասարդության մեջ գնալով ավելի ու ավելի մեծ չափեր է ընդունում տեխնիկական գիտելիքներին տիրապետելու և ստացած գիտելիքները հայրենի լեռնարդյունաբերության մեջ ներ-

դնելու ձգտումը։ Գրքում գծվում են այն առաջին հայ ինժեներների կերպարները, որոնք իրենց գործունեությամբ նշանակալի հետք են թողել հայկական տեխնիկական մտքի զարգացման պատմության մեջ։ Լեռնային ինժեներներ Սոլոմոն Արղութինսկի և Սոլոմոն Մելիքով, նշանավոր երկրաբան Անդրեաս Արծրունի և ինժեներ Սմբատ Մելիք-Ստեփանյան, հիդրոշինարար-ինժեներ Գ. Կիրակոսով և երկաթուղային շինարարության խոշորագույն մասնագետ ինժեներ Գ. Շահբուդաղով, — ահա մի քանիսը հայ տեխնիկական մասնագետներից, որոնք անցյալ դարում իրենց կրթությունը ստանալով Ռուսաստանի կամ Եվրոպայի բարձրագույն ուսումնական հաստատություններում, այնուհետև ամբողջովին իրենց նվիրեցին հայրենի երկրի արտադրողական ուժերի զարգացման գործին։ Հեղինակի գիտական փաստարկների միջոցով ընթերցողը այստեղ տեղեկանում է նախասովետական շրջանում հայկական տեխնիկական ինտելիգենցիայի ձևավորման ու զարգացման մի քանի կարևոր առանձնահատկություններին։

Աշխատության երկրորդ գլուխը նվիրված է հայկական սովետական տեխնիկական ինտելիգենցիայի ձևավորման ու զարգացման պատմությանը 1920—1940 թվականներն ընկած ժամանակաշրջանում։

Հայաստանում սովետական կարգերի հաստատմամբ սկսվում է մեր ժողովրդի վերածնդի պրոցեսը կյանքի բոլոր բնագավառներում։ Հայաստանի նորաստեղծ սովետական իշխանությունն իր գոյության առաջին իսկ օրերից խնդիր դրեց ամեն գնով իրականացնել երկրի քայքայված արտադրողական ուժերի վերականգնումը և ժողովրդի համար ստեղծել տնտեսական նորմալ պայմաններ։ Այդպիսի խնդրի իրականացումը պահանջում էր նյութական հսկայական միջոցներ, վիթխարի ստեղծագործական եռանդ, որ պետք է դրսևորեր կապիտալի կապանքներից ազատագրված մարդը։ Բայց դա բոլորը չէր։ Անհրաժեշտ էր ունենալ հարուստ գիտելիքներով օժտված մասնագետներ, որոնք իրենց ձեռքը վերցնեին ժողովրդական տնտեսության տեխնիկական ղեկավարումը։ Բայց աշխատավորների իշխանությունը որտեղի՞ց պետք է վերցներ այդ մասնագետներին։ Հեղինակը ցույց է տալիս, թե ինչպես, կատարելով Վ. Ի. Լենինի ցուցումները, Հայաստանի նորաստեղծ սովետական իշխանությունը սոցիալիստական շինարարության մեջ համարձակորեն ներգրավում էր տեխնիկական հին ինտելիգենցիային։

Հին կարգերի պայմաններում կրթություն ստացած ու դաստիարակված հայ ինտելիգենցիան իր դասակարգային ծագումով միաբնական չէր։ Նա միասնական չէր նաև իր ձգտումներով ու երազանքներով։ Ահա թե ինչու սովետական իշխանության հաղթանակից հետո ոչ բոլոր տեխնիկական մասնագետներն էին, որ հիշտ ըմբռնեցին կատարվածի իմաստը։ Նրանց մեծ մասը անվարան կանգնեց պրոլետարական հեղափոխության դրոշի տակ և ակտիվորեն ներգրավվեց սոցիալիստական շինարարության մեջ։ Մյուսներբ հենց սկզբից անվստահություն ցուցաբերեցին պրոլետարիատի դիկտատուրայի նկատմամբ և հրաժարվեցին իրենց գիտելիքները ծառայեցնել հեղափոխության շահերին։ Երրորդները բացահայտ թշնամաբար տրամադրվելով դեպի նոր կարգերը, գերադասեցին անցնել արտասահման։ Սակայն վերջիններս կազմում էին հայ տեխնիկական ինտելիգենցիայի փոքրաթիվ մասը։ Նախասովետական հայ ինտելիգենցիան իր ենշող մեծամասնությամբ անդավաճան ուխտով կապվեց ժողովրդական նոր իշխանության հետ և իր ուժերը չխնայեց Սովետական Հայաստանի վերելքի գործում։

Իրենց հարուստ գիտելիքներն ու փորձը վերածնվող հայրենիքին անմնացորդ նվիրաբերեցին հանճարեղ ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանն ու տաղանդավոր հիդրոշինարար Ի. Տեր-Աստվածատրյանը, քիմիկոսներ Ռոտինյանը, Գ. Գուրգենյանը, Ս. Ղամբարյանը, Ա. Մելիք-Աղամիրյանը, շինարար-ինժեներ Ս. Լիսիցյանը, լեռնային ինժեներ Ե. Ջանփոլադյանը, հայտնի մետալուրգ Ա. Սարդսյանը, ինժեներներ Ի. Փիրումովը, Լ. Մելիք-Նուբարովը, Լ. Տեր-Միքայելյանը և շատ ուրիշներ։

Հեղինակի օգտագործված բազմաթիվ փաստերը, նրա համոզիչ շարադրանքը մեկ անգամ ևս դալիս են հերքելու բուրժուական պատմագրության այն գրպարտչական վերսիան, ըստ որի կոմունիստները իշխանության գլուխ անցնելով «բռնություն» գործադրեցին հին ինտելիգենցիայի նկատմամբ և նրան «վերացրեցին աստարեզից»։

Բազմաթիվ պատմական փաստաթղթերի օգնությամբ գրքում քայլ առ քայլ ցույց են տրվում այն միջոցառումները, որոնք հին տեխնիկական ինտելիգենցիայի օգտագործման հետ միասին իրականացնում էին Հայաստանի կոմկուսը և հանրապետության կառավարությունը նոր, սովետահայ տեխնիկական ինտելիգենցիայի ստեղծման ուղղությամբ։ Նթե վերականգնման տարիներին թերևս հնարավոր էր բավարարվել ինժեներա-տեխնիկական այն կադրերով, որոնք կրթվել ու դաստիարակվել էին նախասովետական շրջանում՝ հին գիտա-տեխնիկական բազայի վրա,

ապա սոցիալիստական լայն շինարարության պայմաններում, երբ խնդիր էր դրվում երկիրը փոխադրել ժամանակակից ինդուստրիայի ռելսերի վրա, այլևս անհնար էր բավարարվել հին կադրերով։ Սոցիալիստական շինարարության վիթխարի խնդիրների կենսագործումը հրամայաբար պահանջ էր առաջադրում՝ ստեղծել ինժեներա-տեխնիկական մեծաքանակ կադրեր բանվորների ու գյուղացիների միջավայրից։

Դրքում ցույց է տրվում այն կոնկրետ աշխատանքը, որ Հայաստանի կուսակցական ու սովետական կազմակերպությունները կատարում էին տեխնիկական ուսումնական հաստատությունների ստեղծման և ընդլայնման ուղղությամբ։ Սովետական Հայաստանի տեխնիկական ինտելիգենցիայի ստեղծման գործում 20—30-ական թվականներին զգալի դեր խաղացին բանֆակները, լանաղան տեխնիկական դասընթացները և այլն։ Սակայն առանձնապես վիթխարի եղավ Երևանի պետական համալսարանի, հետագայում նրանից զատված Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի և բազմաթիվ տեխնիկական միջնակարգ ուսումնական հաստատությունների դերը, որոնք մինչև Հայրենական պատերազմը երկրի ժողովրդական տնտեսությանը տվեցին մի քանի հազար բարձր ու միջին որակավորում ունեցող ինժեներա-տեխնիկական աշխատողներ։ 1940 թվականին հանրապետության արդյունաբերության մեջ, տրանսպորտում և շինարարության ասպարեզում հաշվվում էին շուրջ 6.000 ինժեներա-տեխնիկական աշխատող, որից 1400-ը դիպլոմավորված ինժեներներ էին, ավելի քան 1500-ը՝ դիպլոմավորված տեխնիկներ։

Այսպիսով, Սովետական իշխանության դոյության 20 տարիների ընթացքում Հայաստանում ստեղծվեց սովետական տեխնիկական ինտելիգենցիայի բազմաքանակ մի ջոկատ, որի ճնշող մեծամասնությունը կազմված էր բանվորա-գյուղացիական երիտասարդությունից։ 1941 թ. նախօրյակին հանրապետության ինժեներա-տեխնիկական աշխատողների 80 %-ը սովետական, և առաջին հերթին Սովետական Հայաստանի բուհերի և տեխնիկումների շրջանավարտներն էին։

Հայրենական մեծ պատերազմի տարիներին, չնայած պատերազմական ժամանակաշրջանի մեծ դժվարություններին, ինժեներա-տեխնիկական կադրերի պատրաստումը Հայաստանում չդադարեց։ Հանրապետության կուսակցական ու սովետական կազմակերպությունների ջանքերով բացվեցին տեխնիկական ուսումնական նոր հաստատություններ, ընդլայնվեց Հայաստանի ինժեներա-տեխնիկական կադրերի պատրաստման հիմնական դարբնոցը՝ Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտը։

Այնտեղ բացվեցին նոր բաժիններ, որոնցում պատրաստված մասնագետները աշխատում էին երկրի պաշտպանական նշանակություն ունեցող կառույցներում ու ձեռնարկություններում։ Հայրենական պատերազմի տարիներին Հայաստանում ինժեներա-տեխնիկական կադրերի պատրաստման պատմությանն է նվիրված գրքի հաջորդ՝ երրորդ գլուխը։

Աշխատության վերջին գլխում տրված է ետպատերազմյան քսան տարիների ընթացքում տեխնիկական ինտելիգենցիայի պատրաստման ուղղությամբ Հայաստանում տարած աշխատանքների գիտական վերլուծությունը։

Այս շրջանում ինժեներա-տեխնիկական կադրերի պատրաստումը պայմանավորված էր մի շարք միանգամայն նոր հանգամանքներով։ Ետպատերազմյան ժամանակաշրջանում վիթխարի թափ ընդունեց արդյունաբերական ձեռնարկությունների շինարարությունը։ Մեկը մյուսի հետևից ոչ միայն հանդես էին գալիս արդյունաբերական առանձին օբյեկտներ, այլև ամբողջական համալիրներ, արտադրության միանգամայն նոր ճյուղեր։ Հանրապետության արդյունաբերությունը բարձրացավ որակական միանգամայն նոր աստիճանի։ Փոխվեց արտադրության տեխնիկական բազան, փոփոխվեց նաև նրա ստրուկտուրան։ Արտադրական պրոցեսների ավտոմատացման ու մեքենայացման շնորհիվ մեծ չափով բարձրացավ աշխատանքի արտադրողականությունը։ Գրքում հիմնավորվում է, թե ինչպես այս ամենը հրամայաբար առաջ էր քաշում միանգամայն նոր խնդիրներ տեխնիկական կադրերի պատրաստման գործում։ Անհրաժեշտ էր ոչ միայն մեծ չափով ընդլայնել տեխնիկական ուսուցման ցանցը, այլև, որ ամենակարևորն էր, ուսուցումը կազմակերպել ժամանակակից գիտության ու տեխնիկայի նորագույն նվաճումների հիման վրա։ Արխիվային բազմաթիվ փաստերով և պարբերական մամուլի օգնությամբ հեղինակը ցույց է տալիս ետպատերազմյան շրջանում հանրապետության տեխնիկական ինտելիգենցիայի աճի դինամիկան, վեր է հանում տեխնիկական կադրերի պատրաստման ուղղությամբ կուսակցական ու սովետական օրգանների կատարած աշխատանքը, բացահայտում է այդ գործում տեղ գտած թերությունները։ Հեղինակը միաժամանակ իր քննադատական վերաբերմունքն է ցուցաբերում հանրապետության պլանավորման օրգանների կողմից տեխնիկական կադրերի պատրաստման ուղղությամբ թույլ տված սխալների նկատմամբ։

Արդեն ընթացիկ տասնամյակի սկզբին Սովետական Հայաստանի ժողովրդական տնտեսությունը այլևս ինժեներա-տեխնիկական կադրերի սուր պակաս չէր զգում։ 1964—65 ուսումնական տարում միայն Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում սովորում էին 8688 ուսանողներ՝ 58 մասնագիտությունների գծով։ Նույն տարում ժողովրդական տնտեսության մեջ աշխատում էին բարձր և միջին որակավորում ունեցող մոտ 30 հազար մասնագետներ։ Նրանք նախկինի նման ոչ միայն իրականացնում էին արտադրության տեխնիկական ղեկավարումը, այլև աշխատում էին հանրապետության բազմաթիվ գիտա-հետազոտական հիմնարկներում ու կոնստրուկտորական բյուրոներում, նախագծում և ստեղծում նոր մեխանիզմներ ու մեքենաներ, իրականացնում էին արտադրության որակական բարձրացման նպատակին ուղղված բազմաթիվ այլ միջոցառումներ։ Այս գլխում հեղինակը մանրամասն խոսում է նաև այն մեծ աշխատանքների մասին, որ վերջին տարիների ընթացքում Հայաստանում կատարվել են երեկոյան և հեռակա տեխնիկական ուսուցման ընդլայնման, ինժեներա-տեխնիկական կադրերի որակավորման բարձրացման և նրանց վերաորակավորման ուղղությամբ։

Աշխատության վերջաբանում հեղինակը անում է մի շարք հետաքրքիր ու կոնկրետ առաջարկներ տեխնիկական կադրերի պատրաստման գործը Հայաստանում բարելավելու ուղղությամբ։

Ալ. Գրիգորյանցի այս հետաքրքիր ու արժեքավոր աշխատությունը, իհարկե, զերծ չէ թերություններից։ Աշխատությունը կշահեր, եթե հեղինակը ավելի հանգամանորեն ցույց տար, թե ինչպիսի մեծ դժվարությունների հաղթահարման գնով է հանրապետությունում ստեղծվել տեխնիկական ուսուցման առկա նյութական բազան։ Ցանկալի է, որ հեղինակը կոնկրետ նյութի վերլուծության միջոցով հետևեր այն փոփոխություններին, որոնք տեղի են ունեցել տեխնիկական ուսումնական հաստատությունների ուսումնական ծրագրերում՝ արդյունաբերության ու տեխնիկայի առաջընթացին զուգահեռ՝ վերջին տասնամյակների ընթացքում։ Գրքում համեմատաբար քիչ տեղ է հատկացված ուսումնական պրոցեսի կազմակերպման հարցերին, ուսանողների կողմից տարվող գիտա-հետազոտական աշխատանքների վերլուծությանը։ Հատկապես վերջին տարիների ընթացքում հանրապետությունում մեծ աշխատանքներ տարվեցին հեռակա և երեկոյան տեխնիկական ուսուցման զարգացման, ուսումնական հաստատությունների ճիշտ տեղաբաշխման, դրանց լաբորատորիաներն ու բաժինները ուսումնա-փորձնական ժամանակակից սարքավորումներով ու ապարատներով հագեցնելու ուղղությամբ։ Ցանկալի է, որ կատարված այս աշխատանքները նույնպես իրենց հանգամանալից լուսաբանումը գտնեին աշխատության մեջ։

Իհարկե, այս մասնակի թերությունները բնավ էլ չեն իջեցնում գրախոսվող աշխատության արժեքը։ Պատմական գիտությունների թեկնածու Ալ. Գրիգորյանցի՝ «Հայաստանի տեխնիկական ինտելիգենցիայի ձևավորումը և զարգացումը (1920—1965)» գիրքը ընթերցողին պարզ ու ամբողջական պատկերացում է տալիս Հայաստանում տեխնիկական ինտելիգենցիայի առաջացման, նրա զարգացման հաջորդական էտապների մասին՝ սկզբից մինչև մեր օրերը։ Գիրքը պատմական նյութի գիտական փաստագրություն է։ Հեղինակը արխիվային փաստաթղթերի ու վավերագրերի քննադատական վերլուծությամբ, պատմաբանի համբերատարությամբ ու բարեխղճությամբ ստեղծել է մի գործ, որ օգտակար լինելով պատմաբանների, տնտեսագետների ու սոցիոլոգների համար, միաժամանակ կարող է հետաքրքրություն առաջ բերել ընթերցողների լայն շրջաններում։

ՀՐ. ՍԻՄՈՆՅԱՆ